ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՆԻՍՏԻ

Ք.Մեծամոր

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Մարատ Հովհաննիսյան- Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Գևորգ Խաչատրյան - զարգացման ծրագրերի,տուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի պետ
Հանձնաժողովի քարտուղար՝ Անահիտ Խաչատրյան- համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ
Հանձնաժողովի անդամներ՝
Տոնիկ Մացակյան- համայնքի ավագանի
Քնարիկ Գալստյան- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ
Արմինե Մարգարյան- «Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրեն
Նաիրա Առաքելյան- «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ նախագահ
Աղվան Գրիգորյան- համայնքի ակտիվ բնակիչ
Ժորա Զաքարյան- կամավոր
Տիգրան Իզրյան- կամավոր

ՕՐԱԿԱՐԳ

Մեծամոր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում նախապատրաստական փուլի իրականացում:
Լսեցին.

1. Հանձնաժողովի նախագահ Մարատ Հովհաննիսյանին,
Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին, նշեց մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլի մեկնարկի մասին
2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Գևորգ Խաչատրյանին,
Նա ներկայացրեց նախապատրաստական փուլի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն

Մեծամոր համայնքի ավագանու 2025թ մարտի 21-ի թիվ 048-Ա որոշմամբ սկիզբ է դրվել մասնակցային բյուջետավորման գործընթացը:
Համայնքի ղեկավարի 2025թ ապրիլի 3-ի N 833-Ա որոշմամբ ստեղծվել է գործընթացի կառավարման հանձնաժողով, հաստատվել են հանձնաժողովի իրավասությունները, գործընթացի իրականացման ընթացակարգերը, չափանիշները և ձևաթղթերը:
Առաջարկեց կազմել միջոցառումների իրականացման ժամանակցույց և ներկայացնել Մեծամոր համայնքի ղեկավարի հաստատմանը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլի մեկնարկը գնահատել դրական:

2. Միջոցառումների իրականացման ժամանակացույցը ներկայացնել համայնքի ղեկավարի հաստատմանը:

3. Իրազեկման փուլը սկսել 14.04.2025թ-ից

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արարատ Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Անահիտ Խաչատրյան